ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2020 թվականի փետրվար ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2020 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 6658.6 մլն դրամ՝ պլանավորված 6170.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 7.9 տոկոսով կամ 488.6 մլն դրամով:

Փետրվար ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3658.5 մլն դրամ՝ պլանավորված 3270.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 11.9 տոկոսով կամ 388.5 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 113 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 14 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 19 ստուգումներ, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 16 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 71 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 48-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 6-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 4-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 13 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 11 հայցադիմում՝ 130 հազ. դրամ գումարով:

Դատական մարմինների կողմից նույն ժամանակահատվածում կայացվել է 16 վճիռ՝ 80671.8 հազ. դրամ ընդհանուր գումարով, որից 10-ը՝ 29834.6 հազ. դրամ

գումարով, բռնագանձման հայցերի, 2-ը՝ 50797.2 հազ. դրամ գումարով, սնանկության հայցերի և 4-ը՝ 40 հազ. դրամ գումարով, վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ հայցերի հիման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 66 վարչական գործով սահմանվել է 804 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 8614 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 8341:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 63 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում փետրվար ամսում կատարվել է վերադարձ 114 վարձու աշխատողի՝ 15.4 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 24 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ԱՀ ֆինանսների նախարարի հրամանով սահմանվել է ռոյալթիի հաշվարկ-հաշվետվության և հաշվետու տարում կնքված, փոփոխված և լուծված պայմանագրերի վերաբերյալ տեղեկությունների ձևերը, հաստատվել հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգից բխող 2020 թվականի միջոցառումների ցանկն ու աշխատանքային խմբի կազմը, փոփոխություններ կատարվել «Հարկային մարմնի փաստաթղթաշրջանառության կանոնակարգման մասին» N 245 հրամանում:

Հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում՝ երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել թվով մեկ հայտարարություն:

Հաշվետու ամսում շարունակվել է կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր գործընթացը, որի շրջանակներում 93 քաղաքացու վերադարձվել է սոցիալական վճարի ավել վճարված մասը:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել և վարձու աշխատողներին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 1444 տեղեկանք:

Փետրվար ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 350, ելքագրվել՝ 202 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 6 գրություն, որից 4-ը՝ էլեկտրոնային եղանակով: